ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011Թ. ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԹԻՎ 132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունիսի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2012-2015թթ զարգացման ծրագրի մշակման աշխատանքներն իրականացնող ոլորտային աշխատանքային խմբերի կազմերը հաստատելու մասին>> 132-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝

   1) որոշման <<5. Տարածքային և տեղական ինքնակառավարում>> բաժնից հանել

<< Բոշյան Գրիգոր - Գավառի քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/
Հարությունյան Վանիկ – Գանձակի համայնքի ղեկավար /համաձայնությամբ/>>
բառերը.

   2) որոշման <<5. Տարածքային և տեղական ինքնակառավարում>> բաժնի վերջում ավելացնել

<< Խլղաթյան Սևակ - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Գևորգյան Աննա – ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ
Հովհաննիսյան Ռիտա – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Հարությունյան Արամ - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ>> բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ